

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԼՂՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից հաշվետու 2011 թ. ընթացքում  
կատարած աշխատանքների մասին

Հաշվետու ժամանակահատվածում ԼՂՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝  
հիմք ընդունելով «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի  
47-րդ հոդվածի 3-րդ մասը, ղեկավարվելով նույն օրենքի 6-րդ բաժնի դրույթներով և  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության «Գնումների գործընթացի  
կազմակերպման մասին» թիվ 133-Ն առ 22.03.2011թ. որոշմամբ, 2011թ. հոկտեմբերի  
14-ին հրավիրած նիստում՝ խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ  
հաստատել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գնումների բողոքարկման  
խորհրդի գործունեության կարգը: Նշված կարգով սահմանվել են Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդի նպատակներն ու  
գործառույթները, խորհրդի ներքին կազմակերպումը, խորհրդի անդամների  
իրավունքներն ու պարտականությունները, բողոքարկման ընթացակարգը:

Հիմք ընդունելով ԼՂՀ ֆինանսների նախարարության թիվ 03-3/1055 առ 24.10.11թ.  
գրությունը՝ «Արցախյան զորքերի» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տեղեկությունների հիման  
վրա «Տեխնոթրայդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք  
չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ պաշտոնական  
ընթացակարգ նախաձեռնելու մասին, գործը քննելու նպատակով խորհրդի անդամների  
կազմից ձևավորվել է համապատասխան հանձնաժողով: Հանձնաժողովը՝ լրիվ,  
օբյեկտիվ և բազմակողմանի քննության առնելով նշված գործի նյութերը, 14.11.2011թ.-ին  
կայացրել է որոշում, որի ուժով «Տեխնոթրայդ» ՍՊԸ-ն ներառվել է գնումների  
գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 6 (վեց)  
ամիս ժամկետով: